Արձանագրություն N2
«ՋԿ-ԳՀԾՁԲ-22/8-Տ» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան 27 մայիսի 2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ասրյանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սիմոնյանը, Ս. Միրոյանը և Գ. Մելիքսեթյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ոռոգման համակարգերի հիմնանորոգման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման ՋԿ-ԳՀԾՁԲ-22/8-Տ ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2022 թվականի մայիսի 25-ին, ժամը 16:00-ին:

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/8-Տ ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

Մասնակցի անվանումը	հասցե, հեռախոսահամար	էլեկտրոնային հասցե
«Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ	ք. Երևան, Վ. Վաղարշյան 12 հեռ. 010 273660	awd@hjni.am
«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ, գ. Ոստան, Թեիլերյան 14 հեռ. 043 600090	gritig@inbox.ru
«Ռիջիդ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Գեղամավան 2-րդ փ., 3-րդ նրբ. 25 տ. հեռ. 093 355787	rigidalgroup@gmail.com

Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 **նախահաշվային արժեք – 1 992 950 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)** Տեխնիկական հսկողության ծառայություններ - ՀՀ Արարատի մարզի Քաղցրաշեն-2 պոմպակայանի մղման խողովակաշարի կառուցման աշխատանքների				
	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	800 000	-	800 000
	«Ռիջիդ» ՍՊԸ	1 195 000	-	1 195 000
	«Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ	1 200 000	240 000	1 440 000
Չափաբաժին 2 **նախահաշվային արժեք – 3 517 500 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)** Տեխնիկական հսկողության ծառայություններ - ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի ջրանցքի ձախ ճյուղի հիմնանորոգման աշխատանքների				

	«Ռիջիդ» ՍՊԸ	1 990 000	-	1 990 000
	«Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ	2 500 000	500 000	3 000 000

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/8-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակից **«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի** հայտով չեն ներկայացվել ՋԿ-ԳՀԾՁԲ-22/8-Տ ծածկագրով հրավերի «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշով սահմանված Հավելված 3–ին կից փաստաթղթերը՝ առաջարկվող աշխատակազմում ներգրավված մասնագետի հաստատած գրավոր համաձայնությունը՝ բնօրինակից արտատպված (սկանավորված), իրականացվելիք աշխատանքներում վերջինիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետի անձնագրի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր, արտոնագիր և այլն) պատճենները:

Մասնակից **«ՌԻՋԻԴ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված աշխատակազմում ներառված (Հավելված 3) Դերենիկ Վարդանյանի որակավորումը չի համապատասխանում Հրավերով պահանջվող մասնագետների որակավորմանը (ինժեներ-հիդրոտեխնիկ):

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/8-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

Համաձայն Հրավերի 8.9 և 8.10 կետերի՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը՝ առաջարկելով մասնակիցներ **«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ին** և **«Ռիջիդ» ՍՊԸ-ին՝** մինչև կասեցման ժամկետի ավարտը (30.05.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ ---------- Ս. Ասրյան

Անդամներ ---------- Ա. Սիմոնյան

---------- Ս. Միրոյան

---------- Գ. Մելիքսեթյան

Քարտուղար ---------- Ա. Սարգսյան